ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաներ են տրամադրվել*** «Դեգա», «Ավտո Կրեդիտ» և «Կրեդիտ Ալիանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 282Ա, 294Ա, 295Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Կրեդիտ Հաուս», «ԱԼՄԵԼԵՌՈՒԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատան կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 283Ա, 284Ա):
- ***«ԻՆՏԵԼ ԷՔՍՊՐԵՍ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 292Ա):
- ***Դադարեցվել է*** «Մոբիդրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական ընկերության «Նալբանդյան 28» մասնաճյուղը (որոշում թիվ 297Ա):
- ***Գրանցվել են*** «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ և «Արարատ բանկ» բաց բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Տիգրան Մեծ» և «Նոր-Նորք 1» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/1005Ա, 1/1049Ա):
- ***Գրանցվել է*** «ՊրոԿրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Տիգրան Մեծ» և «Մաշտոց» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշումներ թիվ 1/1031Ա, 1/1043Ա):
- ***Գրանցվել են*** «Ինգո Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Արտաշատ», «Գավառ», «Հրազդան» և «Եղեգնաձոր» ներկայացուցչությունները (որոշում թիվ 1/1052Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության, 3 գրավատների, 2 արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 6960000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/1012Ա, 1/1041Ա, 1/1074Ա, 1/1075Ա, 1/1077Ա, 1/1101Ա) և 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, 1 գրավատան, 5 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1022Ա, 1/1040Ա, 1/1065Ա, 1/1076Ա, 1/1089Ա, 1/1090Ա, 1/1102Ա):

*«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողների համար հաշիվների բացման, ինչպես նաև փակման դեպքերում հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրման վերաբերյալ կարգը» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2001 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 319 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով

Սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում հարկային մարմնում հաշվառված հարկ վճարող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար բանկային հաշիվների բացման դեպքում հաշիվների բացման մասին, ինչպես նաև հաշիվների փակման դեպքում հաշիվների փակման մասին հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով տեղեկացման կարգը, ինչպես նաև բարելավել Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրը և ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի թիվ 240-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2013 թվականի միջոցառումների ծրագրի» «1.11» կետի կատարումը,

Հիմք ընդունելով

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը,

Ղեկավարվելով

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **ո ր ո շ ու մ է .**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողների համար հաշիվների բացման, ինչպես նաև փակման դեպքերում հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրման վերաբերյալ կարգը»՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2001 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում բանկային հաշիվներ բացելիս ստորագրությունների նմուշների քարտերը հարկային մարմիններին հաշվառման ներկայացնելու վերաբերյալ կարգը» հաստատելու մասին թիվ 319 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի նոյեմբերի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 հունիսի 2014 թ., N 142-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հունիսի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.10.2014 թ. (ՀՀԳՏ N26 (505)[1], 22.10.2014):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հունիսի 24-ի թիվ 142-Ն որոշմամբ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 664-Ն հրամանով

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՓԱԿՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում հարկային մարմնում հաշվառված հարկ վճարող հանդիսացող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի համար բանկային հաշիվների բացման դեպքում հաշիվների բացման մասին, ինչպես նաև հաշիվների փակման դեպքում հաշիվների փակման մասին հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրման կարգը:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են՝

1) ***հարկային մարմին***՝ «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկային մարմին,

2) ***հաճախորդ (հաշվետեր)***՝ հարկային մարմնում հաշվառված հարկ վճարող հանդիսացող կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև հաշիվ բացելիս բանկին իր հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) ներկայացնող անձ, որոնց համար բացվում է հաշիվ կամ որոնց համար բացված հաշիվը փակվում է,

3) ***կազմակերպություն***՝ իրավաբանական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկներ և առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական և համայնքային կառավարչական հիմնարկներ, ինչպես նաև ներդրումային ֆոնդեր:

4) ***Բանկ***՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

5) ***Բանկին և նրա կառուցվածքային ստորաբաժանմանը նույնականացնող հնգանիշ կոդ***՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կառուցվածքը, ինչպես նաև հաճախորդների դրամական հաշվեհամարների կառուցվածքը սահմանելու մասին» կարգի համաձայն Բանկին և նրա կառուցվածքային ստորաբաժանմանը (գլխամաս կամ մասնաճյուղ) տրամադրված Գրանցման և Համակարգին մասնակցության հնգանիշ կոդ,

6) ***Հաշիվ***՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ բանկային հաշվի պայմանագրի հիման վրա Բանկում Հաճախորդի համար բացված բանկային հաշիվ (բացառությամբ թղթակցային հաշիվների, հաշվարկների իրականացման նպատակով բացվող տեխնիկական հաշիվների, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի համաձայն բացվող հաշիվների, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և նոր ստեղծվող ֆինանսական կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով բացվող կուտակային հաշիվների),

7) ***Տեխնիկածրագրային միջավայր***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեխնիկածրագրային տիրույթ, որի միջոցով իրականացվում է սույն կարգով սահմանված ընթացակարգով Հաշվի բացման, ինչպես նաև փակման հետ կապված տեղեկատվության փոխանակումը Բանկի և Հարկային մարմնի միջև:

3. Հաճախորդի կողմից Բանկում Հաշվի բացման, ինչպես նաև Հաճախորդի Հաշվի փակման դեպքերում Բանկը պարտավոր է Հաճախորդի գրավոր համաձայնության առկայության դեպքում համապատասխանաբար Հաշվի բացման կամ փակման մասին տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով տրամադրել Հարկային մարմնին ոչ ուշ, քան Հաշվի բացման կամ փակման օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ձևավորելով Հաշվի բացման կամ փակման մասին էլեկտրոնային հաղորդագրություն (այսու-

հետ՝ Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրություն), որը պարտադիր պետք է ներառի սույն կարգի 12-րդ կետով սահմանված տեղեկատվությունը:

4. Յուրաքանչյուր բացվող կամ փակվող Հաշվի համար Բանկը պետք է ձևավորի առանձին էլեկտրոնային հաղորդագրություն՝ սույն կարգով սահմանված ընթացակարգի համաձայն:

5. Բանկի գլխամասում կամ մասնաճյուղում Հաշվի բացման, ինչպես նաև փակման դեպքերում համապատասխանաբար Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրությունը ձևավորվում է Բանկի գլխամասի կողմից:

6. Հարկային մարմինը, ստանալով Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրությունը, ստուգում է դրանում առկա տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը և ոչ ուշ, քան հաղորդագրության ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրը, Բանկին ուղարկում է Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրության ընդունման վերաբերյալ հաղորդագրություն (այսուհետ՝ Ընդունման վերաբերյալ հաղորդագրություն) կամ չի ընդունում Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրությունը և ուղարկում է Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրության մեջ տեղ գտած սխալների վերաբերյալ հաղորդագրություն (այսուհետ՝ Սխալների վերաբերյալ հաղորդագրություն): Սխալների վերաբերյալ հաղորդագրությունը ուղարկվում է, եթե Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրության մեջ լրացված է եղել սխալ տեղեկատվություն:

7. Սխալների վերաբերյալ հաղորդագրությունը ստանալու դեպքում Բանկը ոչ ուշ, քան Սխալների վերաբերյալ հաղորդագրության ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրը Հարկային մարմնին սույն կարգով սահմանված ընթացակարգով համապատասխանաբար ուղարկում է Հաշվի բացման կամ փակման մասին նոր հաղորդագրություն:

8. Եթե Բանկը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետում չի ստանում ոչ Ընդունման վերաբերյալ հաղորդագրությունը և ոչ Սխալների վերաբերյալ հաղորդագրությունը, ապա Բանկը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը Հարկային մարմնին սույն կարգով սահմանված ընթացակարգով համապատասխանաբար ուղարկում է Հաշվի բացման կամ փակման մասին նոր հաղորդագրություն:

9. Բանկը Հաշվի բացման դեպքում Հաշվով գործառնություններ կարող է իրականացնել միայն Հարկային մարմնի կողմից Հաշվի բացման մասին հաղորդագրությանն ի պատասխան ուղարկված Ընդունման վերաբերյալ հաղորդագրությունը ստանալուց հետո:

10. Հաշվի բացման, ինչպես նաև փակման հետ կապված տեղեկատվության փոխանակումը Բանկի և Հարկային մարմնի միջև իրականացվում է Տեխնիկածրագրային միջավայրի կիրառմամբ:

11. Հաշվի բացման, ինչպես նաև փակման հետ կապված տեղեկատվության փոխանակման ձևը, ընթացակարգերը, անվտանգության ապահովման միջոցները, Հաշվի բացման մասին, Հաշվի փակման մասին, Ընդունման վերաբերյալ և Սխալների վերաբերյալ հաղորդագրությունների ֆորմատները, ինչպես նաև մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Բանկերում բացված Հաշիվների վերաբերյալ Հարկային մարմնում առկա տեղեկատվության ստուգման ընթացակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը Հարկային մարմնի հետ համատեղ:

12. Հաշվի բացման դեպքում Հաշվի բացման մասին, ինչպես նաև Հաշվի փակման դեպքում Հաշվի փակման մասին Հարկային մարմնին տրամադրվող տեղեկատվությունը պետք է պարտադիր ներառի՝

1) Հաճախորդի (Հաշվետիրոջ) Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրության հերթական համարը,
2) Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրության ուղարկման ամսաթիվը,
3) Բանկի և նրա այն կառուցվածքային ստորաբաժանման (գլխամաս կամ մասնաճյուղ) անվանումը, որտեղ բացվել է Հաճախորդի (Հաշվետիրոջ) Հաշիվը կամ որտեղ բացված Հաճախորդի (Հաշվետիրոջ) Հաշիվը փակվել է, ինչպես նաև Բանկին և նրա կառուցվածքային ստորաբաժանմանը նույնականացնող հնգանիշ կոդը,
4) Հաշվի բացման կամ փակման ամսաթիվը,
5) Հաճախորդի (Հաշվետիրոջ) համար բացված կամ փակված Հաշվի համարը,
6) Բացված կամ փակված Հաշվի արժույթը,
7) Հաճախորդի (Հաշվետիրոջ) անվանումը (անուն, ազգանունը),
8) Հաճախորդի (Հաշվետիրոջ) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), ընդ որում՝ Հաշվի բացման կամ փակման մասին հաղորդագրությունը ձևավորելիս Բանկը պետք է իրականացնի Հաճախորդի (Հաշվետիրոջ) ՀՎՀՀ-ի առկայության և համապատասխանության ստուգում,
9) Հաճախորդի (Հաշվետիրոջ) հաշվառման վայրի հարկային մարմնի կոդը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունվարի 22-ի «Կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել 9-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

«9) ***կենսաթոշակային հաշվի տեր***՝ անձ, որի անունով մասնակիցների ռեեստրը վարողի կողմից բացվել է կենսաթոշակային հաշիվը,

10) ***փայատեր***՝ անձ, որի անունով մասնակիցների ռեեստրը վարողի կողմից բացված կենսաթոշակային հաշվում առկա են փայեր,

11) ***մասնակից***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնակից, ինչպես նաև այն անձը, ով դարձել է փայատեր ժառանգությամբ փայեր ձեռք բերելու արդյունքում:»,

2) Կանոնակարգի 7-րդ կետի 7-րդ ենթակետում «կենսաթոշակային տարիքում» բառերը փոխարինել «կենսաթոշակ ստանալու հիմքով» բառերով,

3) Կանոնակարգի 27-րդ կետում «կուտակային հատկացումների և նրանց պատկանող» բառերը փոխարինել «օգտին կատարած կուտակային հատկացումների և նրանց կենսաթոշակային հաշիվներում առկա» բառերով,

4) Կանոնակարգի 30-րդ կետի 4-րդ ենթակետը «վարվող՝» բառից հետո լրացնել «փայերի» բառով,

5) Կանոնակարգի 31-րդ կետում՝

ա. առաջին նախադասությունից հանել «(ներառյալ այն անձանց, ովքեր դարձել են փայատեր ժառանգության տնօրինման արդյունքում)» բառերը,

բ. երկրորդ նախադասությունից հանել «մասնակիցների» բառը,

6) Կանոնակարգի 31-րդ կետում, 38-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում, 39-րդ կետում, 41-րդ կետի 1-4-րդ ենթակետերում, 42-րդ կետի 1-3-րդ և 6-րդ ենթակետերում «1.1-1.25» թվերը փոխարինել «1.1-1.26» թվերով,

7) Կանոնակարգի 41-րդ կետի 1-5-րդ ենթակետերից և 42-րդ կետի 1-3-րդ ենթակետերից հանել «(այդ թվում՝ նրանց, ովքեր դարձել են մասնակից ժառանգությամբ փայեր ձեռք բերելու արդյունքում)» բառերը,

8) Կանոնակարգի 36-րդ կետի 4-րդ ենթակետում «հերթականությամբ՝ ըստ Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով» բառերը փոխարինել «ըստ Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով» բառերով,

9) Կանոնակարգի 42-րդ կետում՝

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ««4) ***միանվագ վճար***՝ սյունակի համապատասխանաբար «անձանց թիվը» և «գումարը» ենթասյունակների 1.1-1.26-րդ տողերում լրացվում են համապատասխան տարիքի և սեռի այն մասնակիցների թիվը և վճարված գումարի չափը (հազար դրամներով), ում համար հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային ֆոնդերից վճարումներ է կատարել միանվագ վճարների տեսքով, ընդ որում՝ 6 -

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. սեպտեմբերի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.10.2014 թ. (ՀՀԳՏ N26 (505)[1], 22.10.2014):

15-րդ սյունակներում բաշխելով դրանք ըստ Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով, 56-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով, ինչպես նաև 57-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերի,»,

բ. 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ««5) ***Մնացորդը»*** սյունակի «Անձանց թիվը» ենթասյունակում լրացվում է 1.1-1.26-րդ տողերում նշված համապատասխան ծննդյան տարեթվի և սեռի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կենսաթոշակային ֆոնդերից վճարում ստացած մասնակիցների թիվը, ում կենսաթոշակային հաշիվներում առկա են եղել մնացորդային փայեր հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ: Սույն սյունակի «գումարը» ենթասյունակի 1.1-1.26-րդ տողերում լրացվում է հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկված՝ համապատասխան ծննդյան տարեթվի և սեռի այն մասնակիցների կենսաթոշակային հաշիվներում առկա փայերի հաշվարկային արժեքների մեծությունը (հազար դրամներով), ովքեր հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կենսաթոշակային ֆոնդերից վճարում են ստացել,»,

գ. 6-րդ ենթակետում «2-19-րդ» բառերը փոխարինել «2-17-րդ» բառերով,

10) Կանոնակարգի 44-րդ կետի 1-ին ենթակետում և 45-րդ կետի 1-ին ենթակետում «40-րդ» բառը փոխարինել «35-րդ» բառով,

11) Կանոնակարգի 47-րդ կետի առաջին նախադասության «կառավարչի՝ իր» բառերը փոխարինել «կառավարիչների՝ իրենց» բառերով, և երկրորդ նախադասությունը հանել,

12) Կանոնակարգի 48-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Թիվ 6 հաշվետվության «48. ***Ֆոնդերի ծածկագրերը***» տողի 1-6-րդ սյունակներում լրացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրված համապատասխան ծածկագրերը, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գտնվել են կառավարիչների կառավարման ներքո:»,

13) Կանոնակարգի 1-ից 5-րդ Հավելվածների վերնագրերում «Պարտադիր կուտակային կենսաթոշակային» բառերը փոխարինել «Կուտակային» բառով,

14) Կանոնակարգի Հավելված 1-ի Աղյուսակ 3-ում, Հավելված 3-ի Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում, Հավելված 4-ի Աղյուսակ 1-ում լրացնել հերթական «1.26 ...» տող,

15) Կանոնակարգի Հավելված 2-ի Աղյուսակ 3-ի 4.1-րդ տողում «Կենսաթոշակային տարիքում» բառերը փոխարինել «Կենսաթոշակ ստանալու հիմքով» բառերով,

16) Կանոնակարգի Հավելված 4-ի Աղյուսակ 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,

17) Կանոնակարգի Հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
25 սեպտեմբերի 2014 թ., N 249-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 249-Ն որոշմամբ

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի
հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված
«Կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը
վարողի՝ կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ի

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՖՈՆԴԵՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔԸ

Ամսաթիվը _____ թ-ից

Մինչև _____ թ.

(հզ. դրամ)

Մասնակիցները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ ծննդյան տարեթվի և սեռի	**Կենսաթոշակային վճարումների հիմքը**														**Մնացորդը**	
	Աննպաստ		Կենսաթոշակային ֆոնդերից													
			Ծրագրային վճար		Միանվագ վճար											
					կենսաթոշակի դիմաց		**հաշմանդամության դիմաց**		**կենսաապահովման դիմաց**		**օտարերկրացիների՝ իրենց մշտական բնակության վայր վերադառնալու դիմաց**		**թաղման դիմաց**			
	արական թիվ	էական	արական թիվ	էական	արական թիվ	էական	արական թիվ	էական	արական թիվ	էական	արական թիվ	էական	արական թիվ	էական	արական թիվ	էական
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*
1.1. ծնված մինչև 1951 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.2. ծնված 1952 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.3. ծնված 1953 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.4. ծնված 1954 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.5. ծնված 1955 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.6. ծնված 1956 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.7. ծնված 1957 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																

1.8. ծնված 1958 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.9. ծնված 1959թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.10. ծնված 1960 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.11. ծնված 1961թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.12. ծնված 1962 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.13. ծնված 1963 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.14. ծնված 1964թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.15. ծնված 1965թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.16. ծնված 1966 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.17. ծնված 1967 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.18. ծնված 1968 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.19. ծնված 1969 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.20. ծնված 1970 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.21. ծնված 1971 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.22. ծնված 1972 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.23. ծնված 1973 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.24. ծնված 1974 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.25. ծնված 1975 թ., այդ թվում՝																
արական սեռի																
իգական սեռի																
1.26.																
Ընդամենը																

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 249-Ն որոշմամբ

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի
հունվարի 22-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված
«Կուտակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը
վարողի՝ կենտրոնական բանկ ներկայացվող
հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
բովանդակությունը և պարբերականությունը» կանոնակարգ 5/08-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

Մինչև _____*թ.*

(հզ. դրամ)

Ամսվա օրերը	Ֆոնդերի ծածկագրերը											
	Տոկոսային դրամարկղում	Դիսկոնտային եկամտաբերությամբ դրամարկղում	Տոկոսային դրամարկղում	Դիսկոնտային եկամտաբերությամբ դրամարկղում	Տոկոսային դրամարկղում	Դիսկոնտային եկամտաբերությամբ դրամարկղում	Տոկոսային դրամարկղում	Դիսկոնտային եկամտաբերությամբ դրամարկղում	Տոկոսային դրամարկղում	Դիսկոնտային եկամտաբերությամբ դրամարկղում	Տոկոսային դրամարկղում	Դիսկոնտային եկամտաբերությամբ դրամարկղում
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												
13												
14												
15												
16												
17												
18												
19												
20												
21												
22												
23												
24												
25												
26												
27												
28												
29												
30												
31												
միջին												

*«Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում Կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**[*]

Հաշվի առնելով, որ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և այլ կազմակերպությունները, որոնք իրավասու մարմնի կողմից տրված լիցենզիայի համաձայն, իրավասու են մատուցելու վճարահաշվարկային ծառայություններ, կարող են մասնակցել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի թույլտվությամբ,

նպատակ ունենալով

առավել արդյունավետ կերպով վերլուծել և գնահատել բոլոր այն ռիսկերը (իրավական, ֆինանսական, գործառնական, այդ թվում՝ տեղեկատվական անվտանգության), որոնք կարող են պայմանավորված լինել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կանոններով և վերջինիս գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով կամ դրանցում առկա թերություններով և բացերով, և որոնց առկայությունը կարող է բերել ինչպես համակարգում մասնակցող Հայաստանի Հանրապետության բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական վիճակի վատթարացմանը, այնպես էլ բացասաբար անդրադառնալ Համակարգով վճարահաշվարկային ծառայությունների մատուցման նկատմամբ հանրության վստահության վրա,

կանխարգելել և վերահսկել այն բոլոր ռիսկերը, որոնք կարող են վտանգել Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը՝ կապված արտասահմանյան համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետությունում մատուցվող ծառայությունների ծավալի հետ,

արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվության տրամադրման գործընթացն առավել դյուրին դարձնելու միջոցով նպաստել Կենտրոնական բանկի կողմից կատարվող աշխատանքների օպտիմալացմանը,

հիմք ընդունելով

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 8-րդ մասերը և 8-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 71-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում Կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի ««Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ը հաստատելու մասին» թիվ 296-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
25 սեպտեմբերի 2014 թ., N 250-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. սեպտեմբերի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.10.2014 թ. (ՀՀԳՏ N26 (505)[1], 22.10.2014):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 19

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում (այսուհետ՝ Համակարգ) մասնակցության թույլտվության տրամադրման, Համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և Համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և վճարահաշվարկային կազմակերպությունների, ինչպես նաև հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորների վրա, որոնք մասնակցում են արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում (բացառությամբ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի «ժը» կետով սահմանված համակարգերի) կամ դիմել են Կենտրոնական բանկ՝ նման մասնակցության թույլտվություն ստանալու նպատակով (այսուհետ՝ Հայաստանյան մասնակից):

3. Սույն կանոնակարգը չի տարածվում հայաստանյան վճարահաշվարկային համակարգի այն մասնակիցների վրա, որոնք հայաստանյան վճարահաշվարկային համակարգի և Համակարգի օպերատորների միջև կնքված պայմանագրի հիման վրա են ստացել Համակարգով փոխանցումներ իրականացնելու հնարավորություն:

4. Սույն կանոնակարգով սահմանված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ ցանցի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով կամ պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով: Ընդ որում՝ փաստաթղթերը ներկայացվում են Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի էֆ» ֆորմատով (բացառությամբ՝ էքսել ֆորմատով ներկայացվող փաստաթղթերի): Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում նշվում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական, և գիտակցում են, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և Համակարգում մասնակցության թույլտվության տրամադրման մերժմանը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Սույն կանոնակարգի իմաստով.
   1) ***Համակարգի օպերատոր***՝ Օրենքի 3-րդ հոդվածի «դ» կետով սահմանված արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի օպերատոր,
   2) ***Համակարգի գործունեության կանոններ***՝ Համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կանոններ, համաձայն որոնց սահմանվում է Համակարգում մասնակցության պայմանների, կիրառվող վճարային գործիքների և մատուցվող ծառայությունների, մասնակիցների միջև քլիրինգի, պրոցեսինգի իրականացման և վերջնահաշվարկի կատարման հետ կապված ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկածրագրային միջոցների կիրառման կարգն ու պայմանները, որոնցով ապահովվում է վճարման կատարումը շահառուին,
   3) ***Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատոր***՝ Օրենքի 3-րդ հոդվածի «դ» կետով սահմանված հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատոր,
   4) ***Համակարգի հաշվարկային բանկ***՝ վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպություն՝ Օրենքի 3-րդ հոդվածի «է» կետով սահմանված գործողությունն իրականացնող կազմակերպություն,

5) ***Համակարգում պրոցեսինգ իրականացնող կազմակերպություն***՝ Օրենքի 3-րդ հոդվածի «ժ» կետով սահմանված գործընթացի իրականացումն ապահովող կազմակերպություն,
6) ***Համակարգում քլիրինգ իրականացնող կազմակերպություն***՝ Օրենքի 3-րդ հոդվածի «զ» կետով սահմանված գործընթացի իրականացումն ապահովող կազմակերպություն,
7) ***Արագ փոխանցումների համակարգ***՝ առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգ,
8) ***Գնահատված անվանացանկ***՝ Կենտրոնական բանկի կողմից պարբերաբար թարմացվող և Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում տեղադրված հայաստանյան շուկայում արդեն իսկ գործող Համակարգերի անվանացանկ, որը գործում է Կենտրոնական բանկի կողմից գնահատված ծառայությունների շրջանակում՝ հիմք ընդունելով համակարգերին բնորոշ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կամ միջոցառումների առկայությունը,
9) ***Հասցեական փոխանցում***՝ փոխանցում, որի գումարը կարելի է ստանալ փոխանցման հանձնարարականում նշված Համակարգի մասնակցի սպասարկման կետից,
10) ***Անհասցե փոխանցում***՝ փոխանցում, որի գումարը կարելի է ստանալ Համակարգի ցանկացած մասնակցի սպասարկման կետերից:

ԳԼՈՒԽ 3. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՅԴ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

6. Սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված կարգով թույլտվություն ստանալու համար Համակարգը պետք է բավարարի հետևյալ չափանիշներից առնվազն մեկը.
1) Համակարգի մասնակիցների քանակը երեքից քիչ է՝ թույլտվություն ստանալու համար դիմող Հայաստանյան մասնակցին չհաշված, կամ
2) պատկանում է ՎԻԶԱ և/կամ ՄԱՍՏԵՐՔԱՐԴ քարտային վճարումների համակարգերին, կամ
3) պատկանում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում տեղադրված Գնահատված անվանացանկում նշված համակարգերին՝ ըստ ծառայությունների տեսակի:

7. Սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված չափանիշներին համապատասխանող Համակարգի մասնակիցը Կենտրոնական բանկ է ներկայացնում.
1) սույն կանոնակարգի 10-րդ կետի 1-ին, 4-րդ, 5-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը,
2) չափանիշների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն Հավելված 1-ի:

8. Եթե Հայաստանյան մասնակցի կողմից ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված չափանիշներին, կամ փաստաթղթերը թերի են ներկայացված (ամբողջական չեն կամ առկա են որոշակի թերություններ), Կենտրոնական բանկը, ոչ ուշ, քան փաստաթղթերի ներկայացման 20-րդ օրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանյան մասնակցին: Փաստաթղթերը թերի լինելու դեպքում Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված 20-օրյա ժամկետի հաշվարկը սկսվում է Ընկերության կողմից շտկված և (կամ) բացակայող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ մուտքագրելու օրվանից:

9. Եթե Համակարգը չի համապատասխանում սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված չափանիշներից ոչ մեկին, ապա Համակարգում մասնակցության համար թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է սույն կանոնակարգի գլուխ 4-ի համաձայն:

ԳԼՈՒԽ 4. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

10. Համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու համար Հայաստանյան մասնակիցը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
1) Համակարգում մասնակցելու թույլտվություն ստանալու միջնորդագիր՝ համաձայն Հավելված 2-ի,
2) Համակարգում մասնակցության տնտեսական հիմնավորման տեղեկանք՝ համաձայն Հավելված 3-ի,
3) Համակարգի գործունեության ընդհանուր նկարագրությանը և Համակարգի գործունեությանն առնչվող այլ տեղեկատվության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն Հավելված 4-ի,
4) Հայաստանյան մասնակցի իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն Հավելված 5-ի,
5) Համակարգի օպերատորի հետ կնքված պայմանագրի պատճենը կամ կնքվելիք պայմանագրի նախագիծը: Ընդ որում, այն դեպքում, երբ Հայաստանյան մասնակցի կողմից թույլտվություն ստանալու համար ներկայացվել է Համակարգի օպերատորի հետ կնքվող պայմանագրի նախագիծը, Համակարգի օպերատորի հետ պայմանագիրը կնքելուց հետո՝ առավելագույնը եր-

կու ամսվա ընթացքում, Հայաստանյան մասնակիցը Կենտրոնական բանկ է ներկայացնում պայմանագրի ստորագրված տարբերակի պատճենը: Այն դեպքում, երբ Հայաստանյան մասնակիցը Համակարգին մասնակցում է ոչ ուղղակի եղանակով (Գործակալի միջոցով), ապա անհրաժեշտ է նաև ներկայացնել հղում այն փաստաթղթին (օրինակ՝ պայմանագիր) կամ իրավական ակտին (օրինակ՝ համակարգի կանոն), համաձայն որի Գործակալն իրավասու է պայմանագիր կնքել Հայաստանյան մասնակցի հետ, ինչպես նաև Գործակալին նման իրավասություն տվող պայմանագրի պատճենը,

6) Համակարգում մասնակցության հնարավոր ռիսկերի գնահատումը պարունակող տեղեկանք՝ համաձայն Հավելված 6-ի,
7) Համակարգի օպերատորի և վերջինիս սեփականատերերի վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն Հավելված 7-ի,
8) Կենտրոնական բանկի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Համակարգի գործունեության առանձնահատկությունները բնութագրելու համար:

11. Սույն կանոնակարգի 10-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված տեղեկանքը կարող է չպարունակել այն տեղեկությունները, որոնք արդեն իսկ ներառված են Կենտրոնական բանկ ներկայացված այլ փաստաթղթերում: Նման դեպքերում տեղեկանքը պարունակում է հղում նշված իրավունքները կամ պարտականությունները սահմանող փաստաթղթի համապատասխան կետերին (օրինակ՝ Համակարգում վերջնահաշվարկի ապահովման հետ կապված Հայաստանյան մասնակցի և օպերատորի պարտավորությունները և իրավունքները, ինչպես նաև դրանց չկատարման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները _____ տե՛ս __ _____ ____ թ. հաստատված Համակարգի կանոնների 1-ից 4-րդ կետեր):

12. Եթե սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված փաստաթղթերը թերի են ներկայացված (ամբողջական չեն կամ առկա են որոշակի թերություններ), Կենտրոնական բանկը ոչ ուշ, քան փաստաթղթերի ներկայացման 30-րդ օրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանյան մասնակցին, որը պարտավոր է տեղեկացմանը հաջորդող տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել շտկված և (կամ) բացակայող փաստաթղթերը: Սույն կետով սահմանված ժամկետի ընթացքում անհրաժեշտ շտկումների (փաստաթղթերի, նյութերի կամ պարզաբանումների) չներկայացման դեպքում Համակարգում մասնակցության թույլտվությունը մերժվում է՝ փաստաթղթերը թերի կամ ոչ ամբողջական լինելու հիմքով:

13. Համակարգում մասնակցության թույլտվության տրամադրումը մերժելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին տեղեկացնում է Հայաստանյան մասնակցին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը: Համակարգում մասնակցության թույլտվության տրամադրումը մերժելու դեպքում Հայաստանյան մասնակիցն իրավունք ունի Համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու նոր միջնորդագիր ներկայացնել Կենտրոնական բանկ ընդհանուր կարգով:

ԳԼՈՒԽ 5. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

14. Կենտրոնական բանկի՝ թույլտվության տրամադրման գործընթացի համար պատասխանատու ստորաբաժանման կողմից վարվում է Համակարգերում մասնակցության թույլտվությունների գրանցամատյանը, որում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

1) Համակարգի անվանումը,
2) Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը՝ Համակարգում մասնակցության թույլտվություն տալու վերաբերյալ,
3) Հայաստանյան մասնակցի անվանումը,
4) Համակարգում մասնակցության թույլտվությունը կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու դեպքում՝ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը:

15. Թույլտվությունների գրանցամատյանը բաց է համընդհանուր ծանոթացման համար:

ԳԼՈՒԽ 6. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

16. Հայաստանյան մասնակիցը Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկին տեղեկացնում է Համակարգի գործունեության կանոններում կատարվող հետևյալ փոփոխությունների վերաբերյալ՝

1) Համակարգի օպերատորի, հաշվարկային բանկի, քլիրինգ և (կամ) պրոցեսինգ իրականացնող կազմակերպության փոփոխությունը/անվանափոխությունը,
2) Մասնակցի կողմից մատուցվող ծառայությունների ավելացումը կամ նախկինում մատուցվող ծառայությունների իրականացման վճարահաշվարկային սխեմայի (մեխանիզմների) փոփոխությունը,

3) Համակարգում վերջնահաշվարկի իրականացման մեխանիզմների կամ ժամկետների փոփոխությունը,
4) Համակարգում մասնակցության չափանիշների (պայմանների), մասնակցության կասեցման կամ դադարեցման պայմանների փոփոխությունը,
5) Համակարգի օպերատորի հետ կնքված պայմանագրում տեղ գտած փոփոխությունները, ինչպես նաև Համակարգի օպերատորի հետ կնքված պայմանագրի կասեցման, դադարեցման կամ վերսկսման մասին տեղեկությունները,
6) Համակարգում կիրառվող տեղեկատվական անվտանգության մեխանիզմների փոփոխությունը,
7) Համակարգի հետ ինտեգրված/հարակից համակարգերի և ինտեգրման սխեմաների փոփոխությունը,
8) Այլ փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել սույն կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված մեթոդաբանությամբ գնահատվող ռիսկերի ավելացմանը:

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում Կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ի

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքով հավաստիացնում եմ, որ _____
(Համակարգի անվանումը)
Համակարգը, որին մենք նախատեսում ենք անդամակցել, համապատասխանում է արտասահմանյան վճարահաշվարկային Համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը Կենտրոնական բանկի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 19-ով սահմանված արտասահմանյան վճարահաշվարկային Համակարգը բնութագրող հետևյալ չափանիշին կամ չափանիշներին.

1) Համակարգի մասնակիցների քանակը _____
2) Համակարգը գործում է ՎԻԶԱ և/կամ ՄԱՍՏԵՐՔԱՐԴ քարտային վճարումների համակարգերում _____
(նշել անվանումը)
3) Համակարգը ներառված է Կենտրոնական բանկի կողմից սահմանված Գնահատված անվանացանկի մեջ _____
(Համակարգի անվանումը)

Հավաստիացնում եմ նաև, որ Համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը Կենտրոնական բանկի 2014 թ. սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 19-ով սահմանված Համակարգը բնութագրող ոչ մի չափանիշի չհամապատասխանելու դեպքում օրենքով սահմանված ժամկետում և կարգով այդ մասին կտեղեկացնեմ Կենտրոնական բանկին:

Մասնակցի գործադիր մարմնի ղեկավար _____ _____
(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ի

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻՋՆՈՐԴԱԳՐԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հայաստանյան մասնակցի անվանումը _____

Համակարգի անվանումը, պաշտոնական կայքը

_____

Համակարգի օպերատորի անվանումը (գրանցման հասցեն/երկիրը/պաշտոնական կայքը)

_____

Համակարգում Հայաստանյան մասնակցի մասնակցության տեսակը (կարգավիճակը)՝

ա. Հայաստանյան մասնակցի <u>*ուղղակի մասնակցություն*</u>, որի դեպքում ուղղակի մասնակիցը պայմանագիր է կնքում արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի հետ և ստանձնում է պայմանագրով սահմանված պարտավորությունները և պատասխանատվությունը

_____

(նշել մասնակցության տեսակը)

բ. Հայաստանյան մասնակցի <u>*ոչ ուղղակի մասնակցություն*</u>, որի դեպքում վերջինս անդամակցում է Համակարգի ուղղակի մասնակիից հանդիսացող այլ Հայաստանյան մասնակցի կամ այլ ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության միջոցով (այսուհետ՝ Գործակալ)

_____

(նշել մասնակցության տեսակը)

Հայաստանյան մասնակցին սպասարկող Գործակալը _____

(ոչ ուղղակի մասնակցության դեպքում)

Համակարգում Հայաստանյան մասնակցի կողմից մատուցվող ծառայությունների տեսակը/տեսակները՝ տարանջատված հետևյալ կերպ.

ա. առանց բանկային հաշիվների բացման դրամական միջոցների փոխանցման ծառայությունը նշվում է հետևյալ բացվածքով՝ փոխանցումների կատարումը ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց, շահառուին միջոցների տրամադրում կանխիկ և (կամ) անկանխիկ եղանակով, փոխանցումների կատարում տերմինալների միջոցով և այլ

_____

(նշել ծառայության տեսակը)

բ. բանկային հաշիվների միջոցով դրամական միջոցների փոխանցման ծառայությունը նշվում է հետևյալ բացվածքով՝ միջոցների տրամադրում (վճարում), այդ թվում՝ քարտային հաշիվների միջոցով, քլիրինգի, պրոցեսինգի և/կամ վերջնահաշվարկի ծառայությունների իրականացում

_____

(նշել ծառայության տեսակը)

գ. վճարային քարտային ծառայությունը նշվում է հետևյալ բացվածքով՝ քարտերի թողարկում (դեբետային, վարկային, կանխավճարային), քարտերի սպասարկում (կանխիկ, անկանխիկ, ինտերնետ միջավայրում և/կամ բջջային հեռախոսի միջոցով, այլ), պրոցեսինգի իրականացում, այլ,

_____

(նշել ծառայության տեսակը)

դ. էլեկտրոնային փողերով վճարումների Համակարգում նշվում է հետևյալ բացվածքով՝ թողարկում (միանգամյա, վերալիցքավորվող, քարտային էլեկտրոնային փող, համակարգչային էլեկտրոնային փող և այլ), սպասարկում (կանխիկ, անկանխիկ, ինտերնետ միջավայրում և/կամ բջջային հեռախոսի միջոցով) պրոցեսինգի իրականացում, այլ

_____

(նշել ծառայության տեսակը)

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը _____

(Համակարգի անվանումը)

Համակարգին անդամակցելու համար:

Կից ներկայացնում եմ՝

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

«Ես՝ ներքոստորագրյալս, հավաստիացնում եմ, որ մանրակրկիտ դիտարկել եմ սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում եմ, որ տեղեկատվությունն արժանահավատ է, ամբողջական, և գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:»:

Մասնակցի գործադիր մարմնի տնօրեն _____ _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Հավելված 3

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ

1. Համակարգում մասնակցության տնտեսական հիմնավորման տեղեկանքը պետք է առնվազն ներառի կոնկրետ հաշվարկներ, վերլուծություններ և գնահատված լինի թվային տվյալներով և կազմված հիմնավորման ներկայացմանը հաջորդող երեք տարիների համար: Համակարգում մասնակցության տնտեսական հիմնավորումը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1) Ընդհանուր դրույթներ.

ա. Համակարգի անվանումը,

բ. Համակարգում մասնակցելու նպատակները (հեռանկարները):

2) Գործունեության հիմնական ուղղությունները.

ա. մասնակցի կողմից իրականացվելիք գործառնությունների տեսակները և դրանց համառոտ բնութագիրը,

բ. ապագայում նախատեսվող ծառայությունները:

3) Մարքեթինգային վերլուծություն.

ա. ոլորտի վերլուծություն (ոլորտի մասնակիցները, հիմնական մրցակիցները),

բ. ֆինանսական այն շուկաների նկարագիրը, որոնցում այն պատրաստվում է իրականացնել իր գործունեությունը (հեռանկարային զարգացման միտումները, ռազմավարության հիմնական սկզբունքները),

գ. հաճախորդների խմբի բնութագիրը և կանխատեսվող թիվը:

4) Ռազմավարությունը.

ա. դիրքավորում,

բ. խթանման ռազմավարություն,

գ. գնային ռազմավարություն,

դ. ներդրման ծրագիր:

5) Եկամուտների և ծախսերի մոտավոր հաշվարկը.

ա. ֆինանսավորման աղբյուրները,

բ. առաջիկա երեք տարիների համար նախատեսված եկամուտների և ծախսերի հաշվարկը:

Հավելված 4

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ
հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային
համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը,
արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և
ներկայացված փաստաթղթերում Կենտրոնական բանկին
տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող
չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Համակարգի գործունեության ընդհանուր նկարագրությունը պետք է առնվազն պարունակի.

1) Համակարգի գործունեության նպատակը (առանց բանկային հաշիվների բացման միջազգային դրամական փոխանցումների, վճարային քարտերով գործարքների կատարման ապահովում և այլ),

2) *Համակարգի գործունեության աշխարհագրությունը* (Համակարգի գործունեության երկրները և/կամ դրանց քանակը և այլ),

3) *Համակարգի կողմից կիրառվող վճարային գործիքները* (օրինակ՝ վճարման հանձնարարական, վճարային քարտ, չեկ, էլեկտրոնային փող և այլ),

4) Մասնակցի կողմից իրականացվող գործառնությունների/ծառայությունների իրականացման ընդհանուր գործընթացը, այդ թվում՝ վճարային և տեղեկատվական հոսքերի մշակման կարգը, պայմանները, ժամկետները, ինչպես նաև.

ա. Համակարգում մասնակիցների միջև կիրառվող վերջնահաշվարկի կատարման սկզբունքները (զուտ սկզբունքով, համախառն սկզբունքով, հիբրիդ) և մեխանիզմները, ժամկետները և պարբերականությունը,

բ. Համակարգում կիրառվող տեխնիկածրագրային, հեռահաղորդակցման միջավայրը (նկարագրել).

1) ինտերնետ,

2) առանձնացված կապուղի,

3) այլ:

գ. Համակարգի հետ ինտեգրված/հարակից համակարգերը և ինտեգրման սխեմաները (առկայության դեպքում):

5) Համակարգի մասնակիցների, այդ թվում՝ օպերատորի վերաբերյալ տեղեկատվություն, որն առնվազն ներառում է.

ա. Համակարգում պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունը (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը), գործունեությունը կարգավորող մարմինը (առկայության դեպքում),

բ. Համակարգում քլիրինգ իրականացնող կազմակերպությունը (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը), գործունեությունը կարգավորող մարմինը (առկայության դեպքում),

գ. Համակարգում վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպությունը (նշելով նաև գրանցման հասցեն/երկիրը),

դ. Համակարգի օպերատորի կողմից սահմանված մասնակիցների մասնակցության չափանիշները (առկայության դեպքում), մասնավորապես՝ Հայաստանյան մասնակիցների նկատմամբ մասնակցության առանձնահատուկ պայմանների առկայության դեպքում պետք է հստակ նկարագրված լինեն այդ Համակարգում Հայաստանյան մասնակիցների մասնակցության՝ Համակարգի օպերատորի կողմից սահմանված քաղաքականությունը և չափանիշները, այդ թվում՝ քաղաքականությունը՝ կապված տվյալ երկրում միայն մեկ մասնակցի միջոցով աշխատելու հետ կամ Հայաստանում մասնակիցների ներգրավման հետ (ուղղակի մասնակցության, ոչ ուղղակի մասնակցության, խմբային մասնակցության),

ե. Արագ փոխանցումների համակարգով փոխանցումների հասցեականությունը կամ անհասցեական լինելու դեպքում՝ վերջինիս առկայությունը և փոխանցման արժույթները:

Հավելված 5

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ
հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային
համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը,
արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և
ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին
տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող
չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ի

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Հայաստանյան մասնակցի իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը ներառում է առնվազն հետևյալ տեղեկությունները.

1) Համակարգում վերջնահաշվարկի ապահովման հետ կապված Հայաստանյան մասնակցի և օպերատորի պարտավորությունները և իրավունքները, ինչպես նաև դրանց չկատարման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները,
2) արտասահմանյան այլ վճարահաշվարկային համակարգերում Հայաստանյան մասնակցի մասնակցության իրավասության սահմանափակման հետ կապված պահանջի առկայություն/բացակայություն (առկա է արդյոք սահմանափակում, կապված Հայաստանյան մասնակցի նմանատիպ ծառայություններ մատուցող այլ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու հետ),
3) Հայաստանյան մասնակցի ցանկացած տարածքային ստորաբաժանման տարածքում (մասնաճյուղում) վճարահաշվարկային ծառայությունների մատուցման իրավասության և/կամ սահմանափակման առկայություն/բացակայություն (սահմանված է արդյոք դրույթ, որով օպերատորը պարտավորվում է Հայաստանյան մասնակցի բոլոր մասնաճյուղերում մատուցել վճարահաշվարկային ծառայություն, կամ արդյոք սահմանված է Հայաստանյան մասնակցի տվյալ իրավասությունը սահմանափակող որևէ դրույթ),
4) Համակարգում մասնակցելու իրավասությունից զրկելու/կասեցնելու հիմքերը (սահմանված են արդյոք դեպքեր, երբ Հայաստանյան մասնակիցը կարող է զրկվել Համակարգում մասնակցելու իրավասությունից, եթե այո՝ ապա զրկելու/կասեցնելու ինչ հիմքեր և ժամկետներ են սահմանված յուրաքանչյուր դեպքի համար, Հայաստանյան մասնակցին տեղեկացման ինչ ընթացակարգեր, ժամկետներ, կարգ և պայմաններ են սահմանված),
5) Համակարգի օպերատորի կողմից Համակարգում կատարված/կատարվող փոփոխությունների վերաբերյալ Մասնակցին տեղեկացնելու իրավասությունը (նախատեսված է արդյոք Համակարգի գործունեությանը վերաբերող փոփոխությունների մասին օպերատորի կողմից Հայաստանյան մասնակցին տեղեկացման գործընթաց, եթե այո, ապա որ դեպքերում և ինչ ժամկետներում),
6) Հայաստանյան մասնակցի իրավասությունները և պարտավորությունները կապված գործառնությունների կատարման ժամանակ Համակարգում սահմանված անվտանգության արարողակարգերն ապահովելու հետ,

7) Հայաստանյան մասնակցի և օպերատորի պարտավորությունը/պարտավորությունները՝ կապված հաճախորդներին վճարահաշվարկային ծառայության մատուցման ժամկետների հետ, ինչպես նաև դրանց խախտման դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները,
8) Հայաստանյան մասնակցի և օպերատորի պարտավորությունը/պարտավորությունները՝ կապված Համակարգի անխափան աշխատանքի ապահովման, ինչպես նաև հաճախորդներին վճարահաշվարկային ծառայության մատուցման անհնարինության հետ (այդ թվում՝ Համակարգի օպերատորի կամ Համակարգի այլ մասնակցի մեղքով նախատեսված վճարային ծառայության չկատարման, ինչպես նաև հաճախորդին փոխհատուցման հետ),
9) Հայաստանյան մասնակցի պարտավորությունները, պատասխանատվությունը և իրավասությունները՝ կապված իր կողմից մատուցված ծառայությունների վերաբերյալ հաճախորդների կողմից անհամաձայնություն ունենալու և բողոքարկելու հետ,
10) Հայաստանյան մասնակցի պատասխանատվությունը՝ կապված զեղծարարությունների կամ այլ կերպ գաղտնի տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու արդյունքում հաճախորդին վնաս հասցնելու/միջոցների կորստի հետ,
11) Համակարգում Մասնակիցների պատասխանատվությունը՝ կապված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետ, և մասնակիցներին տվյալ բնագավառում ներկայացվող պահանջները,
12) Հայաստանյան մասնակցի և օպերատորի իրավասությունները/պարտավորությունները գործարքի հետկանչի/չեղյալացման դեպքում (նշել նաև պայմանները և ժամկետները),
13) Համապատասխան հարցման դեպքում համակարգի օպերատորից իր միջոցով կատարվող/կատարված դրամական փոխանցումների մասով կոնտրագենտի (գործարքի մյուս կողմի) նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ ստանալու Հայաստանյան մասնակցի իրավասությունը (սահմանված է արդյոք դրույթ, համաձայն որի համակարգի օպերատորը պարտավորվում է հայաստանյան մասնակցի հարցման դեպքում վերջինիս տրամադրել իր միջոցով կատարվող/կատարված դրամական փոխանցումների մասով կոնտրագենտի (գործարքի մյուս կողմի) նույնականացման վերաբերյալ տվյալներ):

Հավելված 6

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ի

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Համակարգում հնարավոր ռիսկերի գնահատումը պարունակող տեղեկանքը պետք է ներառի հետևյալ ռիսկերի վերլուծությունը և դրանց սահմանափակմանն ու կառավարմանը ուղղված ընթացակարգերի, միջոցառումների և մեխանիզմների նկարագրությունը.

1) *իրացվելիության ռիսկ.* երբ մասնակիցներից մեկն ունենում է (կարող է ունենալ) իրացվելիության համալրման ժամանակավոր խնդիրներ և չի կարողանում ժամանակին կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները,
2) *վարկային ռիսկ.* երբ մասնակիցներից մեկը չի կարողանում կամ հրաժարվում է կատարել (կարող է չկատարել կամ հրաժարվել) իր կողմից ստանձնած պարտավորությունները,
3) *հաշվարկային ռիսկ.* երբ հաշվարկների (վերջնահաշվարկի) հետ կապված խնդիրներ են առաջանում (կարող են առաջանալ) հաշվարկային համակարգերում/սխեմայում,
4) *գործառնական ռիսկ.* երբ խնդիրներ են առաջանում (կարող են առաջանալ) համակարգում տեխնիկածրագրային անսարքությունների, մասնակիցների սխալի և խարդախությունների հետևանքով,
5) *իրավական ռիսկ.* երբ խնդիրներ են առաջանում (կարող են առաջանալ) ոչ հստակ իրավական հիմքերի և գործարքի մասնակից երկրների օրենսդրությունների տարբերության հետևանքով,
6) ինչպես նաև, ընդհանուր առմամբ, Համակարգի *օպերատորի և հաշվարկային գործակալի հետ կապված ռիսկեր.*
   ա. անվճարունակության դեպքում,
   բ. հաշվարկային գործակալի սնանկության դեպքում:

2. Ռիսկերի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ դրույթները՝

1) մասնակիցների կողմից իրացվելիության ապահովման հնարավոր աղբյուրները, միջոցները և ժամկետները,
2) Համակարգում հաշվարկային մեխանիզմը (զուտ, համախառն, այլ),
3) Համակարգում վերջնահաշվարկի կատարման պարբերականությունը, ժամկետները և կարգը,
4) վերջնականության ու անվերադարձելիության պահը, և դրանց հստակ սահմանումը կանոններում և/կամ պայմանագրերում,
5) հաշվարկների զուտացման դեպքում՝ գործընթացի, ժամկետների և մասնակիցների պարտավորությունների ու պատասխանատվության հստակ նկարագրությունը Համակարգի կանոններում և/կամ պայմանագրերում,
6) Համակարգում կամ ըստ մասնակիցների կիրառվող սահմանաչափերի առկայությունը, չափը և դրանց կիրառման արդյունքում առաջացող հնարավոր խոչընդոտները/անհարմարությունները,
7) հաշվի չնվազող մնացորդի, նախնական դեպոնացման կամ դեպոզիտի կիրառման մեխանիզմների առկայությունը, երաշխիքային միջոցների կիրառումը,
8) իրացվելիության (հաշվի մնացորդ, զուտ դիրքի դիտարկում, օրվա վերջում քաղվածքի, զուտ դիրքերի վերաբերյալ տեղեկացում և այլն) և/կամ կատարված վճարումների (ստացված, փոխանցված, վճարման ենթակա և այլն) մոնիթորինգի հնարավորությունները,
9) կարճաժամկետ իրացվելիության խնդիրների դեպքում մասնակիցներին վարկավորման հնարավորությունը (մեխանիզմների առկայություն),
10) արտակարգ իրավիճակներում մասնակիցներին իրացվելիության տրամադրումը,
11) վարկավորման մեխանիզմների առկայությունը, գործընթացը և պայմանները,
12) վարկավորման հնարավորության դեպքում գրավի ապահովման մեխանիզմների կիրառումը և այդ գործընթացի իրավական հստակությունը,
13) մասնակիցների վարկարժանության գնահատումը,
14) տեղեկատվական անվտանգության ռիսկի սահմանափակմանն ու կառավարմանը ուղղված ընթացակարգերը, միջոցառումները և մեխանիզմները.
    ա. վճարահաշվարկային ծառայությանն առնչվող տվյալների ամբողջականության ապահովման և պահպանման մեխանիզմները,
    բ. սահմանված անվտանգության արարողակարգերը, կիրառվող ստանդարտները և այլն:
15) Համակարգի աշխատանքի խափանման/անհնարինության դեպքում այլընտրանքային մեխանիզմների առկայությունը և գործընթացի հստակությունն ու հուսալիությունը,
16) Համակարգը ներդնելուց առաջ թեստավորման իրականացումը և արդյունքների վերլուծությունը,
17) սխալների դեպքում մեղավոր կողմի/կողմերի պատասխանատվության հստակ նկարագրությունը (այդ թվում՝ օպերատորի մեղավորության դեպքում),
18) խախտումների դեպքում պատասխանատվությունների հստակ տարանջատումը,
19) Համակարգի կանոններում էական փոփոխությունների դեպքում օպերատորի կողմից մասնակիցներին տեղեկացման պարտավորության առկայությունը, ժամկետները և գործընթացը,
20) պայմանագրի դադարեցման հիմքերի, ժամկետների և գործընթացի հստակ նկարագրությունը (այդ թվում՝ մասնակցության և դրա զրկման պայմանների հստակ սահմանված լինելը),
21) պայմանագրում հստակ սահմանում, թե անհամաձայնությունների դեպքում որ երկրի օրենսդրությունն է գերակա,
22) ինչպես նաև ցանկացած այլ տեղեկատվություն, որը բնորոշում է Համակարգի առանձնահատկությունը և հնարավորություն տալիս գնահատելու հնարավոր ռիսկերը:

Հավելված 7

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը, արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոններում և ներկայացված փաստաթղթերում կենտրոնական բանկին տեղեկացման ենթակա փոփոխությունների ցանկը և համակարգը բնութագրող չափանիշները, գրանցամատյանի վարման կարգը» կանոնակարգ 19-ի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Համակարգի օպերատորի վերաբերյալ տեղեկատվություն.

1.1. Համակարգի անվանումը _____

1.2. Համակարգի օպերատորի անվանումը _____

1.3. Համակարգի օպերատորի գտնվելու վայրը _____

1.4. Համակարգի օպերատորի գրանցման ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

1.5. Համակարգի օպերատորի տեսակը, որպես կազմակերպություն.

1) ֆինանսական _____,
(նշել տեսակը)

2) այլ _____:
(նշել)

1.6. Համակարգի օպերատորի գործունեությունը կարգավորող մարմինը _____

1.7. Համակարգի օպերատորի ռեզիդենտության երկրի օրենսդրության համաձայն վճարահաշվարկային ծառայություն մատուցելու իրավական հիմքը/հիմքերը.

1) Լիցենզիա_____,
2) Թույլտվություն_____,
3) այլ _____:
(նշել)

2. Համակարգի օպերատորի սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն.

2.1. Համակարգի օպերատորի սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձ-մասնակիցների վերաբերյալ տվյալներ.

Իրավաբանական անձի անվանումը	Գտնվելու վայրը	Գրանցման ամսաթիվը (վայրը, համարը) (օր/ամիս/տարի)	Համակարգում մասնակցության չափը (%)
1.			
2.			

3. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ.
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:

3.1. Տեղեկություններ այլ փոխկապակցված Համակարգերի վերաբերյալ.

Համակարգի անվանումը	Համակարգի օպերատորի անվանումը	Համակարգի օպերատորի գտնվելու վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.			
2.			

3.2. Համակարգի օպերատորի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալներ

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

3.3. Համակարգի օպերատորի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալներ.

Անուն, ազգանուն	Բնակության վայրը	Անձնագրի համար	Փոխկապակցվածության տեսակը
1.			
2.			

Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր:

4. Արդյո՞ք Համակարգի օպերատորի մոտ պահպանված են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կիրառությունը: Այո ☐ Ոչ ☐

«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

5. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն.

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկանալուց հետո առնվազն 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայաստանյան մասնակցի գործադիր մարմնի տնօրեն՝

_____

(անուն, ազգանուն)

_____ Ամսաթիվ _____

(ստորագրություն) *օր/ամիս/տարի*

Կ. Տ.

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2014)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 31

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 34

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 37

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 38

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 49

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի տոկոսադրույք

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 71
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 82
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 84
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 90
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2014թ. սեպտեմբեր*	*2014թ. սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2013թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2014թ. հոկտեմբեր*	*2014թ. հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2013թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		105.1		103.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	119757.0	107.5	121128.9	105.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	218149.4	111.7	140833.5	104.6
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	45730.8	87.0	43110.6	85.6
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	218854.9	102.4	216976.0	102.2
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	99115.7	110.8	100139.9	110.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	629.4	110.2	692.8	116.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	172347[1]	107.0[1,2]	173552[3]	106.5[2]

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2014 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.8	101.1	99.4	101.4
Փետրվար	98.8	100.1	100.9	100.0
Մարտ	99.6	99.6	97.8	98.9
Ապրիլ	100.5	103.0	100.6	100.0
Մայիս	99.2	102.3	101.4	97.5
Հունիս	98.2	99.6	100.6	89.8
Հուլիս	99.1	99.9	100.7	89.6
Օգոստոս	100.7	101.4	100.5	91.0
Սեպտեմբեր	100.4	98.7	100.1	97.7
Հոկտեմբեր	101.0	98.6	99.5	102.5
2014 թ. հունվար – հոկտեմբերը 2013 թ. հունվար – հոկտեմբերի համեմատությամբ	102.9	108.8	102.0	99.7

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2012*	*2013*	*2014*	*2014*	*2014*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	3.6	2.9	2.8	2.8	5.5
Փետրվար	-0.9	-0.4	-1.2	1.6	4.6
Մարտ	0.1	0.4	-0.4	1.2	3.8
Ապրիլ	-0.6	-0.1	0.5	1.7	4.4
Մայիս	-1.3	0.0	-0.8	0.9	3.6
Հունիս	-1.3	-0.1	-1.8	-0.9	1.8
Հուլիս	-1.5	0.4	-0.9	-1.9	0.4
Օգոստոս	-0.4	0.3	0.7	-1.2	0.8
Սեպտեմբեր	0.8	-0.2	0.4	-0.8	1.5
Հոկտեմբեր	1.2	0.3	1.0	0.2	2.2
Նոյեմբեր	1.4	0.9			
Դեկտեմբեր	2.1	1.1			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	3.2	5.6			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	2.6	5.8			

ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՅՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2014 թ. հոկտեմբերը 2014 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**101.00**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**101.40**	**0.76**
Բանջարեղեն և կարտոֆիլ	115.28	0.96
Ձու	106.45	0.09
Մսամթերք	100.53	0.05
Միրգ	98.97	-0.04
Կաթնամթերք	100.45	0.02
Հացամթերք	100.11	0.01
Կենդանական և բուսական յուղեր	99.74	-0.01
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**101.30**	**0.20**
Հագուստ և գործվածք	103.57	0.10
Կոշկեղեն	103.73	0.06
Գեղահարդարման ապրանքներ	101.28	0.03
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	99.41	-0.01
Ծառայություններ, որից՝	**100.00**	**0.00**
Բուժսպասարկման	97.97	-0.08
Հանրային սննդի	103.00	0.05
Հանգստի կազմակերպման	104.24	0.03

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2012	2013	2014
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.65	0.79	0.17
Փետրվար	0.08	0.21	-0.45
Մարտ	0.04	0.53	0.02
Ապրիլ	0.02	0.51	0.14
Մայիս	-0.16	0.38	0.05
Հունիս	0.35	0.54	-0.19
Հուլիս	0.14	0.09	0.30
Օգոստոս	-0.06	0.11	0.81
Սեպտեմբեր	0.67	0.28	1.01
Հոկտեմբեր	0.73	0.29	0.47
Նոյեմբեր	0.37	0.06	
Դեկտեմբեր	0.58	-0.19	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	5.27	3.63	3.03
Փետրվար	4.91	3.73	2.35
Մարտ	4.27	4.20	1.82
Ապրիլ	3.81	4.71	1.44
Մայիս	3.30	5.30	1.09
Հունիս	3.26	5.50	0.43
Հուլիս	3.19	5.49	0.63
Օգոստոս	2.85	5.70	0.32
Սեպտեմբեր	3.10	5.34	0.47
Հոկտեմբեր	3.48	4.85	1.15
Նոյեմբեր	3.47	4.51	
Դեկտեմբեր	3.50	3.69	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**1.15**
Խոզի միս	0.24
Պանիր տնական (կովի կաթից)	0.16
Ծխախոտ «Գառնի»	0.14
Ծառայություններ կարճաժամկետ ապրելու համար կահավորված սենյակների վարձակալության հաճձնման	0.11
Ծխախոտ «ՄՏ» փափուկ	0.11
Ծառայություններ սննդի ապահովման՝ պիցցայի մատուցման	0.08
Ծխախոտ «Ախթամար»	0.08
Ալյուր բարձր տեսակի	0.08
Կարամել	0.06
Թարմ ձուկ «իշխան»	0.06
Չու	-0.07
Շաքարավազ	-0.08
Բուսական յուղ արևածաղկի	-0.18
Տավարի միս	-0.25
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	-0.31

[1] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*

[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

[3] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	*2014 թ. հունվար - սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2014 թ. հունվար-սեպտեմբերը 2013 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2014 թ. հունվար - հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2014 թ. հունվար-հոկտեմբերը 2013 թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1109.2	101.9	1250.1	102.9
Ներմուծում *(ՍԻՖ)*	3191.3	104.6	3626.5	103.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2082.2	106.1	2376.5	104.3

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2013 թվական					
	Հունվար – հոկտեմբեր[1]			Հունվար - դեկտեմբեր[1]		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1397360	190941	1206419	1727945	235155	1492790
ԱՄՆ	131409	111689	19720	152745	134063	18682
Ուկրաինա	15267	17703	-2437	18281	21764	-3483
Ղազախստան	21159	2031	19128	26756	2510	24246
Գերմանիա	20838	34597	-13759	25629	47615	-21987
Իսպանիա	7543	9688	-2145	8860	16492	-7632
Ֆրանսիա	17088	20553	-3465	20652	23448	-2797
ԱՄԷ	27560	38733	-11173	32011	48291	-16280
Չինաստան	5164	69159	-63995	5598	85968	-80370
Թուրքիա	3057	23319	-20262	3398	29292	-25894
Այլ երկրներ	231679	171266	60413	280456	207552	72904
Ընդամենը	**1878124**	**689679**	**1188444**	**2302331**	**852151**	**1450180**

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2014 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր[1]		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	145720	22675	123045	1344843	201051	1143792
ԱՄՆ	13904	10437	3467	123054	127444	-4391
Ուկրաինա	1584	823	761	13781	11272	2510
Ղազախստան	3230	234	2996	28275	7549	20726
Գերմանիա	3489	3985	-496	28889	33278	-4390
Իսպանիա	682	1099	-417	6686	18059	-11373
Ֆրանսիա	1592	2544	-952	17553	16251	1302
ԱՄԷ	1549	5328	-3779	20728	34828	-14100
Չինաստան	213	8230	-8016	3001	70524	-67523
Թուրքիա	211	2036	-1825	2712	19008	-16295
Այլ երկրներ	174411	47017	127394	229504	196635	32869
Ընդամենը	**200866**	**81733**	**119133**	**1819026**	**735899**	**1083127**

[1] *Տվյալները վերանայվել են:*

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար


երկիր	2013 թվական					
	Հունվար – հոկտեմբեր[1]			Հունվար - դեկտեմբեր[1]		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1298615	146095	1152520	1606643	180351	1426292
ԱՄՆ	66724	26624	40099	82339	32933	49407
Ուկրաինա	14097	12009	2088	17019	14812	2207
Ղազախստան	18840	1685	17156	23758	2151	21607
Գերմանիա	12436	6697	5739	15587	8214	7373
Իսպանիա	5183	3862	1321	6439	4602	1837
Ֆրանսիա	11893	4951	6942	14698	6116	8582
ԱՄԷ	6759	5891	868	7723	7874	-150
Չինաստան	1178	9832	(8654)	1390	11829	-10439
Թուրքիա	1542	3577	(2035)	1838	4357	-2519
Այլ երկրներ	76057	40035	36022	92358	50975	41382
Ընդամենը	**1513324**	**261258**	**1252066**	**1869791**	**324213**	**1545578**

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2014 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր[1]		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	137525	17396	120129	1241435	162121	1079314
ԱՄՆ	8895	2607	6288	82773	27881	54893
Ուկրաինա	1541	594	947	12673	8020	4653
Ղազախստան	2101	222	1879	22557	2718	19839
Գերմանիա	1566	606	960	16055	7447	8608
Իսպանիա	564	343	221	5755	3736	2019
Ֆրանսիա	1232	388	845	12708	5045	7664
ԱՄԷ	346	480	-133	5977	5769	208
Չինաստան	75	917	-842	1130	11183	-10052
Թուրքիա	173	257	-84	1665	3174	-1509
Այլ երկրներ	7607	4337	3269	81976	43844	38132
Ընդամենը	**161625**	**28147**	**133479**	**1484706**	**280938**	**1203768**

[1] *Տվյալները վերանայվել են:*





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒՄԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2]

2013	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	122.7	121.3	120.9	120.2	120.2	120.9	127.3	128.4	127.0	125.9	128.4	129.0
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	207.1	206.9	206.5	206.1	206.7	208.8	218.9	220.4	219.5	217.8	220.4	219.9
2014	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	133.3	131.8	131.1	131.9	130.0	128.3	128.8	131.6	134.7	138.0		
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	221.3	222.4	223.8	225.7	225.4	227.3	230.4	234.3	240.5	245.5		

[1] 2013 թ. հունվարին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում՝ 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում՝ 2003-2007 թթ.), 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2013	2014									
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ	2251.6	2113.5	2013.5	1970.3	1879.2	1866.8	1784.0	1912.6	1751.2	1663.3	1671.0
Ոսկի	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	1.9	9.6	32.2	0.6	16.1	4.0	0.5	8.2	0.1	0.3	9.9
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2249.7	2104.0	1981.4	1969.7	1863.1	1862.8	1783.5	1904.5	1751.1	1663.0	1661.0

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2013	2014									
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	644.8	641.4	647.6	630.0	632.6	620.7	615.1	609.9	596.5	582.9	581.7
ԱՄՀ վարկ	365.1	364.0	359.2	341.4	342.6	329.0	322.9	320.1	309.8	298.3	297.7
ՀՓԻ տեղաբաշխում	135.5	135.0	136.2	136.0	136.4	135.6	136.0	134.8	133.6	130.5	130.1
Այլ վարկեր	143.9	142.1	151.9	152.1	152.5	155.3	155.2	154.2	152.7	153.4	153.4
Այլ պարտավորություններ	0.3	0.3	0.3	0.4	1.1	0.8	0.9	0.8	0.4	0.7	0.6

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*


[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Վերանայման ենթակա պարտատոմսերի	Ընդամենը	Կառավարության ընթացիկ հաշիվներից և ավանդներից	Կառավարության ներդրումային նպատակով ներգրավված միջոցներ	ՀԻԿ-երի միջոցներ	ՀԻԿ-երի միջոցներ ներդրումային նպատակով	Ընդամենը	
2013								
Դեկտեմբեր	15259	15259	185847	4702	0	575	191124	**-175865**
2014								
Հունվար	15354	15354	221012	4654	0	579	226244	**-210890**
Փետրվար	14861	14861	209417	4782	0	586	214785	**-199924**
Մարտ	14815	14815	168538	2052	0	586	171176	**-156361**
Ապրիլ	14816	14816	153837	2057	0	586	156481	**-141664**
Մայիս	15098	15098	154394	2030	0	586	157009	**-141911**
Հունիս	15126	15126	166885	2004	0	578	169466	**-154340**
Հուլիս	15148	15148	138535	1973	0	576	141084	**-125935**
Օգոստոս	14780	14780	142304	1977	0	583	144864	**-130084**
Սեպտեմբեր	15041	15041	146131	1905	0	578	148613	**-133572**
Հոկտեմբեր	15238	15238	130789	1919	0	583	133291	**-118053**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա m1 [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլրդ ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	Արտարժութային ավանդներ *(մլրդ ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	Փողի բազայի լծակ [5]	Դրամայնացման գործակից [6]
2013										
Դեկտեմբեր	888057	384467	198901	583369	264677	848046	697327	1545372	1.74	1.31
2014										
Հունվար	783046	338416	184649	523065	270195	793260	700625	1493885	1.91	1.33
Փետրվար	758228	330989	185372	516361	275392	791753	723027	1514781	2.00	1.35
Մարտ	779409	328565	181784	510350	280999	791348	747675	1539023	1.97	1.39
Ապրիլ	755531	335125	190207	525332	281692	807024	743716	1550740	2.05	1.38
Մայիս	752983	341953	191234	533187	289762	822949	753089	1576038	2.09	1.42
Հունիս	713262	347608	196380	543988	291526	835515	752044	1587559	2.23	1.44
Հուլիս	787421	357688	204910	562598	296773	859371	743062	1602433	2.04	1.43
Օգոստոս	731287	365118	191672	556790	297452	854242	750624	1604867	2.19	1.44
Սեպտեմբեր	718843	360417	206087	566504	301341	867845	730562	1598407	2.22	1.45
Հոկտեմբեր	734622	364382	210552	574934	306060	880994	745251	1626245	2.21	1.46

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
900000
750000
600000
450000
300000
150000
0
10
11
12
13
14
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1800000
1500000
1200000
900000
600000
300000
0
10
11
12
13
14
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
20
07
08
09
10
11
12
13
14


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
70
65
60
55
50
45
40
07
08
09
10
11
12
13
14


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2013					
Հունվար	658162	360053	519312	716182	1328764
Փետրվար	692516	355246	521665	720306	1350521
Մարտ	670031	358384	520920	720679	1363062
Ապրիլ	676863	356450	525459	737768	1377669
Մայիս	738280	359484	525149	736929	1394189
Հունիս	688134	356634	522001	741219	1396378
Հուլիս	729250	357111	522250	743745	1412423
Օգոստոս	725801	353230	523067	747968	1428635
Սեպտեմբեր	729865	351900	527956	759080	1454821
Հոկտեմբեր	715164	351812	530698	768453	1467416
Նոյեմբեր	746820	347386	530788	776559	1468041
Դեկտեմբեր	787199	357327	551852	815959	1502357
2014					
Հունվար	782402	346545	532808	798487	1502932
Փետրվար	772091	345271	527060	800374	1518191
Մարտ	785931	342577	523073	800958	1538082
Ապրիլ	778399	344624	539822	814480	1557766
Մայիս	777320	346230	544553	830634	1581432
Հունիս	755331	351690	552410	844106	1599627
Հուլիս	786558	348787	555214	854116	1607317
Օգոստոս	733949	358200	554772	856725	1611349
Սեպտեմբեր	734280	355979	558238	867059	1601674
Հոկտեմբեր	735862	355677	561859	874718	1628169

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամյա պարբերականի տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2013	2014									
	Դ[2]	Հ	Փ	Մ[2]	Ա	Մ	Հ[2]	Հ	Օ	Ս[2]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***654666***	***601739***	***554853***	***544767***	***504913***	***506628***	***474471***	***532611***	***475030***	***454010***	***457772***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***233390***	***181308***	***203375***	***234642***	***250618***	***246355***	***238791***	***254810***	***256256***	***264832***	***276851***
Կառավարություն	-175865	-210890	-199924	-156361	-141664	-141911	-154340	-125935	-130084	-133572	-118053
Բանկեր	174011	163011	154697	140993	140498	131133	142504	128080	125355	144662	135325
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	102669	66547	66544	41560	51517	31530	44526	31523	31539	51573	45601
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	-24505	0	-10002	0	-10002	0	0	0	-1000	0	-3000
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	235244	229187	248601	250010	251784	257133	250627	252665	260985	253743	259579
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***888057***	***783046***	***758228***	***779409***	***755531***	***752983***	***713262***	***787421***	***731287***	***718843***	***734622***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	446833	391958	385219	382531	392578	393784	403275	413120	422278	416650	419734
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	199002	200631	190943	182164	189500	183715	171586	183637	166014	177064	180921
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	238814	186367	171316	209379	170436	172271	133740	186747	138171	120974	131038
Այլ հաշիվներ	3408	4091	10750	5335	3016	3213	4661	3917	4824	4155	2930
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	3405	3810	10609	5333	3013	3198	4646	3914	4809	4152	2927
Այլ հաշիվներ արտարժույթով	3	280	141	3	3	15	15	3	15	3	3
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
